ՆՅՈՒԹԵՐ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ստորև հրատարակվող գրությունները հայտաբերված են տարիներ առաջ, Լենինգրադյան մարզի պետական դիվանում պահվող՝ Պետերբուրգի հայոց եկեղեցիների ունեցվածքի կառավարման խորհրդի գործերից (ֆ. 1754, ց. 1, դ. 832, թ. 1ա-բ, գ. 101, թթ. 96ա-բ և 107ա)։

Ճիշտ է, բացառիկ կարևոր տվյալներ չեն պարունակում դրանք, բայց, իբրև եղելությունների արձանագրումներ, օգնում են հանճարեղ բանաստեղծի կյանքի տարեգրության անծանոթ օղակներն ի հայտ բերելուն։

Ժամանակագրական առումով ամենավաղը Հ. Թումանյանի տաղանդի ջերմ երկրպագու, իշխանուհի Մարիամ Թումանյանի դիմումն է Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդարանին, բանաստեղծի վտանգված առողջությունը վերականգնելու և բոլորանվեր գրական-ստեղծագործական աշխատանքներով պարապելու համար անհրաժեշտ նյութական միջոցներ ստանալու ակնկալիքով, որ սակայն չի իրականանում։ Ինչպես պարզվում է իշխանուհու տակավին անտիպ հուշերից և Ա. Տեր-Գրիգորյանի՝ Պետերբուրգից Տփղիս ուղարկված մի նամակից (22.XII.1902), խորհրդի ազդեցիկ անդամները այս ազնիվ միջնորդությունը մերժելով հանդերձ՝ սկզբում անհարմար են գտել իրենց վճիռը հայտնել, մտածելով, գուցե, տեղի ուսանողության ուժերով կարելի լինի որևէ երեկույթ կազմակերպել և արդյունքը տրամադրել հիշյալ նպատակին, որի դեմ բողոքում են բանաստեղծի բարեկամները, որոնք հետամտում էին, որպեսզի Թումանյանի համազգային ճանաչում գտած տաղանդը մշտապես շրջապատվեր համազգային գուրգուրանքով և ո՛չ թե սրա-նրա ողորմությունն ակնկալեր։

Հաջորդ գրությունը բանաստեղծի Հովհաննես Հովհաննիսյանի գրական գործունեության 30-ամյա հոբելյանի տոնակատարության Տփղիսյան հանձնաժողովի միջնորդությունն է վերոհիշյալ խորհրդին, արված հատկապես Հ. Թումանյանի նախաձեռնությամբ ու անմիջական մասնակցությամբ, դարձյալ նույն նպատակով։ Պետերբուրգի «ազգասերները» այս ազնիվ խնդիրը նույնպես թողնում են անհետևանք, թերևս նկատի առնելով, որ դեռևս 1912 թ. ապրիլի 9-ին որոշել էին առանձին հեռագրով շնորհավորել Հովհաննես Հովհաննիսյանի գրական գործունեության 30-ամյակը և 300-ռուբլիանոց մի նվեր մատուցել։ Այս գրությունը պարզում է նաև մի շատ կարևոր իրողություն։ Ինչպես հայտնի է, 1912 թվականի առաջին ամիսներին Թումանյանը գտնվում էր Պետերբուրգում, իբրև կալանավոր ու դատապարտյալ՝ այսպես կոչված «դաշնակցության գործի» առիթով։ Արդարանալուց անմիջապես հետո, մոռացած երեկվա զրկանքները, նա հետամտել է հայ գրականության պաշտպանության և տաղանդավոր հայ գրողներին նյութապես ապահովելու հարցերով, համապատասխան բանակցություններ վարելով տեղի հայոց եկեղեցիների խորհրդի հետ, որն ուներ պատշաճ միջոցներ և նման օգնություն ցույց էր տալիս իր կանոնադրության հիմամբ։

Վերջապես երրորդը՝ բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանի մահվան առթիվ Թումանյանի հեռագիրը, ապացույց է, թե ինչպես համազգային բանաստեղծը, հայության համար այն մռայլ օրերին, ամեն ինչ անում էր արժանավայել ձևով կազմակերպելու հայ քնարի ազնիվ սպասավորի և իր մտերիմ ընկերոջ հուղարկավորությունը։

Գրությունները լույս են տեսնում ամբողջությամբ և բնագրերին հարազատ։

Պ. Հ.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ

Իշխանուհի Մարիամ Թումանյանից

Խ ն դ ի ր

Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդարանիդ արած բազմաթիվ օգնությունների լուրը, ինչպես տեսնում եք, հասել է մինչև այստեղ։ Լսած եմ, թե ինչպես պատվարժան Խորհուրդը ամեն կերպ աշխատում է ձեռք մեկնելու մեր ժողովրդի օգնության կարոտ անհատներին, և մտածում եմ, որ երևի գերադասում եք ձեր օգնությունը խնդրող այն անհատները, որոնք միևնույն ժամանակ նո՛ւյն այդ ժողովրդի վաստակավոր մշակներն են գրական կամ հասարակական ասպարեզներում։

Այս մտածումներն են ահա՛, որ ինձ դրդեցին դիմելու ձեզ և ձեր օժանդակությունը խնդրելու մեր արդի գրողների մեջ իր տաղանդովը աչքի ընկնող պ. Հովհաննես Թումանյանցի համար։

Ես անչափ ուրախ պիտի լինեմ, եթե հաճեք ընդունել խնդիրքս և ձեր տալիք լուրջ օգնությունը միացնեք մեր այստեղի արած ջանքերին, որով կարողանայինք միջոց տալ ահագին ընտանիքով (8-ը գավակ ունի) ծանրաբեռնված և այժմ էլ բավական ժամանակ ի վեր հիվանդ եղող մեր համակրելի գրողին, որ քիչ կազդուրվի և շարունակի իր աշխատանքը։

Այսպիսով, հարգելի Խորհուրդդ ո՛չ միայն նպաստած պիտի լինի մի հիվանդ աշխատավորի նեղ վիճակը թեթևացնելու, այլև ձեռք տված պիտի լինի մեր գրական սակավաթիվ ներկայացուցիչներից մեկին, որպեսզի սա կազդուրված ուժերով նվիրե իր աշխատանքը մայրենի գրականության։

Հուսալով, որ այս խնդիրքը ձեր համակրության և ընդունելության արժանանալու է՝ մնամ խորին հարգանոք

Մ. Թումանյան

Դեկտեմբերի 5-ին 1902 թ.
Իմ հասցեն՝
Тифлис, Барятинское соб., д. № 8.

<Մակագրություններ.> Հայոց եկեղեցիների խորհուրդ Ս. Պետերբուրգում։ Ստացված է՝ 10 դեկտ. 1902 թ., № 900։ Ընկուցված է՝ 20 դեկտեմբերի 1902 թ.։ Խորհրդի եզրակացությունը՝ մերժված է։ Գրագիր՝ Շատվորյան։

22 մայիսի 1912 թ., Թ ի ֆ լ ի զ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԵԾԱՐԳՈ ԽՈՐՀՐԴԻՆ

Բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի հոբելյանական Թիֆլիզի հանձնաժողովը, ի նկատի ունենալով բանաստեղծի մեծ ծառայությունը հայ գրական-գեղարվեստական ասպարիզում և նրա նյութական սուղ դրությունը, միջոցներ է որոնում նրան այդ դրությունից հանելու։

Հովհաննիսյանը բնությունից օժտված լինելով բանաստեղծական ձիրքով՝ ցայժմ չէ կարողացել յուր ամբողջ ուժերը հայ գրականությանը նվիրել, որով-

հետև մեծ ընտանիքի տեր լինելով՝ ստիպված է եղել շարունակ օրական պարենը հայթայթելու մասին մտածել։ Ընդհանուրի համոզմունքն է, որ եթե Հ. Հովհաննիսյանը նյութական ապահովություն ունենա և գոնե փոքր-ինչ ազատ զգա իրեն ճնշող հոգացողության ծանրությունից, կարող կլինի ավելի մեծ չափով ծառայելու հայ գրական-գեղարվեստական ասպարիզում՝ թե՛ իբրև բանաստեղծ և թե՛ իբրև գեղարվեստական կլասիկ երկերի թարգմանիչ։

Հանձնաժողովս, լսելով պ. Հովհաննես Թումանյանից, որ մեծարգո Խորհուրդդ մտադրություն ունի մի շարք հայ գրողների նյութական ապահովության համար միջոցներ ձեռնարկել, միջնորդում է և խնդրում ձեզ՝ օգտվելով Հ. Հովհաննիսյանի մոտակա հոբելյանից՝ ի հարգանս նրա մատուցած ծառայության և ի բարգավաճումն հայ գեղարվեստական գրականության՝ Պետերբուրգի հայ եկեղեցիների միջոցներից նշանակել նրան տարեկան մի որոշ գումար, իբրև կենսաթոշակ։

Հանձնաժողովս լիահույս է, որ մեծարգո Խորհուրդդ ի շարս յուր օգտակար և կարևոր ձեռնարկությունների՝ հայ բանաստեղծին օգնության հասնելու գաղափարն ևս կիրագործե, քանի որ մեր հասարակության մեջ բացակայում է ձեռներեցության ոգին։

Նախագահ հանձնաժողովի՝ Իսահակ Հարությունյան

Անդամներ՝
- Հովհ. Թումանյան
- Հովհ. Սպենդիարյան
- Նիկոլ Առստամյան
- Բժիշկ Բ. Նավասարդյան
- Արտաշես Աբեղյան
- Երանուհի Գյուզալյան
- Հ. Խունունց (՞)
- Հռիփսիմե Մուրադյան

Անդամ-քարտուղար՝ (ստորագրություն)

<Մակագրություն.> Հայոց եկեղեցիների խորհուրդ Ս. Պետերբուրգում։ Ստացված է՝ 26 մայիսի 1912 թ., № 519։

1917, 1 апреля, в 8 ч. 55 м., Тифлис, № 16/5.

Петроград, Невский, Армянская церковь, Попечительскому совету.

Тридцать первого марта в шесть часов вечера скончался в Тифлисе поэт Александр Цатурьян. О дне похорон особо.

Общество писателей армян

Председатель **Туманян.**

<*Пометы*>—Военный цензор № 248; Совет армянских церковей в Петербурге; Получено пятого апреля 1917 года, № 152; 7/IV. Послать телеграмму с выражением соболезнования.